ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2025թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ «ՄԵԾ ՄԱՅՐԻԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Արին Բերդի փողոցի հ.29 հասցեում գտնվող 15.891459հա հողամասը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18042025-01-0359 վկայական/ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Շիրակի փողոցի հ.2/44 հասցեում գտնվող 12.085535հա մակերեսով հողամասի /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.23122021-01-0193 վկայական/ հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից, դեռևս 2021 թվականին Շիրակի փողոցի հ.2/44 հասցեում հողամասն առանձնացվել էր նոր ավտոբուսային հավաքատեղի կազմակերպելու համար, սակայն հաշվի առնելով հողամասի չափսերը, մոտեցման ճանապարհը, կառուցվածքը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կից գտնվում են բնակելի տներ, ինչպես նաև մթերքի պահպանման համար նախատեսված սառնարանային պահեստ-համալիր, որը հանդիսանում է Երևանի խոշոր լոգիստիկ կենտրոն և որտեղ չի դադարում խոշոր բեռնատարների հոսքը, ծրագրի իրականացման փուլում առաջացել էին բազմաթիվ խնդիրներ և այն փաստացի չի իրականացվել:

«ՄԵԾ ՄԱՅՐԻԿ» ՍՊԸ-ի կողմից 2024 թվականին Երևանի քաղաքապետարան է ներկայացվել առաջարկություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Արին Բերդի փողոցի 4-րդ նրբանցքի հ.4 հասցեում գտնվող հողամասը ավտոբուսների հավաքատեղի կազմակերպելու համար նախատեսված հողամասի հետ փոխանակելու վերաբերյալ, քանի որ այն ունի առավել մեծ հնարավորություններ, զբաղեցնում է ավելի մեծ մակերես և իր տեղադիրքով և հատակագծային լուծումներով գտնվում է նոր ավտոբուսային հավաքատեղի կազմակերպելու համար առավել բարենպաստ դիրքում, իսկ համայնքային հողամասը իր տեղադիրքով և լուծումներով առավել նպատակահարմար է օգտագործել ընկերության կողմից:

Ներկայացված առաջարկը Երևանի քաղաքապետարանի պատասխանատու ստորաբաժանումների կողմից համարվել էր ընդունելի և ընկերությանն առաջարկվել էր ներկայացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման նոր վկայական, քանի որ ընկերությանը պատկանող հողամասի չափը գերազանցում էր փոխանակման համար առաջարկվող հողամասի չափից և շուկայական արժեքի գնահատման ժամանակ հողամասերի համարժեքությունը չէր պահպանվելու: Արդյունքում «ՄԵԾ ՄԱՅՐԻԿ» ՍՊԸ-ին պկանող 18.0հա հողամասից բաժանման հատակագծով առանձնացվել է 15.891459հա մակերեսով հողամաս: Երևանի քաղաքապետի 15.04.2025թ հ.1421-Ա որոշմամբ առանձնացվող հատվածին տրամադրվել է «Արին Բերդի փողոց, հ.29» հասցե:

Ներկայացված նախագծով նախատեսվում է «ՄԵԾ ՄԱՅՐԻԿ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Արին Բերդի փողոցի հ.29 հասցեում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18042025-01-0359 վկայական) գտնվող 15.891459հա մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Շիրակի փողոցի հ.2/44 հասցեում գտնվող 12.085535հա մակերեսով հողամասի հետ:

Շիրակի փողոցի հ.2/44 հասցեում գտնվող հողամասի նկատմամբ գրանցված է Երևան համայնքի սեփականության իրավունքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.23122021-01-0193 վկայական):

Փոխանակման համար առաջարկվող Արին Բերդի փողոցի հ.29 հասցեում գտնվող գույքը՝

անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 18042025-01-0359 վկայականի տվյալների համաձայն գտնվում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերի արդյունաբերական օբյեկտների գոտում, իսկ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի հ.600-Ն որոշմամբ հաստատված հ.3 հավելվածի համաձայն՝ տրանսպորտային կազմակերպությունները (ավտոպարկ, դեպո) ընդգրկված են արտադրական նշանակության շենքի շինությունների դասակարգման ցանկում:

Արին Բերդի փողոցի հ.29 հասցեում գտնվող հողամասը իր տեղադիրքով ու հատակագծային լուծումներով գտնվում է նոր ավտոբուսային հավաքատեղի կազմակերպելու համար առավել բարենպաստ դիրքում: Ընկերության կողմից իրականացվել է նաև տարածքում տրանսպորտի հավաքակայանի տեղամասի ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ, ինչպես նաև փոխանակման արդյունքում իրականացվելու են նաև նախագծանախահաշվային փաստաթղթերի վերանախագծման աշխատանքներ, որը ընկերությունը պարտավորվել է իրականացնել սեփական միջոցների հաշվին:

Հարկ է նշել նաև, որ ներկայումս ընկերությունը իր միջոցների հաշվին և Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված քանդման թույլտվության հիման վրա իրականացնում է Արին Բերդի փողոցի հ.29 հասցեում գտնվող քարե և կիսաքանդ շինությունների ապամոնտաժման աշխատանքներ և փոխանակման արդյունքում համայնքին տրամադրվելու է ազատ և հարթ տարածք:

Մասնագիտական որակավորում ունեցող «ԱԲԻՏ» ՍՊ ընկերության կողմից իրականացվել են Արին Բերդի փողոցի 4-րդ նրբանցքի հ.4 /ներկայումս առանձնացված Արին Բերդի փողոցի հ.29/ և Շիրակի փողոցի հ.2/44 հասցեներում գտնվող հողամասերի 1քմ մակերեսով արժեքի շուկայական գնահատման աշխատանքներ: Արդյունքում, փոխանակվող հողամասի 1-քմ մակերեսով հողամասի շուկայական արժեքը կազմում է 23 403 ՀՀ դրամ, իսկ համայնքային սեփականություն հանդիսացող Շիրակի փողոցի հ.2/44 հասցեում գտնվող հողամասի 1-քմ-ի արժեքը 30 773 ՀՀ դրամ:

Համաձայն հողային օրենսգրքի 71–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի փոխանակումը դրանց օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվում է համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ